



**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ  
ՈՐՈՇՈՒՄ**

6 փետրվարի 2020 թ.

N 35-Ն

ք. Ստեփանակերտ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ 2020-2022 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ  
ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի N 108-Ն հրամանագրով սահմանված կարգի 3-րդ և 5-րդ կետերին համապատասխան՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է**.

1. Հաստատել՝

1) Արցախի Հանրապետության պետական ժողովրդագրական քաղաքականության հայեցակարգի իրականացումն ապահովող 2020-2022 թվականների ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր)՝ համաձայն N 1 հավելվածի:

2) Արցախի Հանրապետության պետական ժողովրդագրական քաղաքականության հայեցակարգի իրականացումն ապահովող 2020-2022 թվականների միջոցառումների ցանկը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Սույն որոշման N 2 հավելվածով նախատեսված պատասխանատու կատարողներին՝ մինչև յուրաքանչյուր հաշվետու տարվա մարտի 1-ը, մոնիթորինգի իրականացման նպատակով, Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարություն (այսուհետ՝ նախարարություն) ներկայացնել տեղեկատվություն՝ Ծրագրի իրականացման ընթացքի մասին:

3. Նախարարությանը՝ մինչև յուրաքանչյուր տարվա ապրիլի 1-ը, Արցախի Հանրապետության պետական ժողովրդագրական քաղաքականության մշակման և իրագործման մշտապես գործող բարձրագույն խորհրդին ներկայացնել ամփոփ տեղեկատվություն՝ Ծրագրի իրականացման ընթացքի մասին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում է»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՐԱՐ



*[Handwritten signature]*

Բ. ՍԱՀԱԿՅԱՆ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ  
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ  
2020-2022 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ**

**I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

1. Արցախի Հանրապետության պետական ժողովրդագրական քաղաքականության հայեցակարգի իրականացումն ապահովող 2020-2022 թվականների ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) բխում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունվարի 26-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական ժողովրդագրական քաղաքականության հայեցակարգը հաստատելու մասին» N 21-Ն որոշման պահանջներից:

2. Ծրագրի նպատակն է Արցախի Հանրապետության պետական ժողովրդագրական քաղաքականության հայեցակարգի իրականացումն ապահովող 2020-2022 թվականների միջոցառումների շնորհիվ ժողովրդագրական բացասական միտումների կանխումն ու իրավիճակի կայունացումը:

**II. ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ**

3. Արցախի Հանրապետության պետական վիճակագրական հաշվետվությունների տվյալներով Արցախի Հանրապետության մշտական բնակչության թվաքանակը 2019 թվականի հունվարի 1-ի դրությամբ կազմել է 148,0 հազար մարդ, որը 2018 թվականի հունվարի 1-ի նկատմամբ աճել է շուրջ 0,7 տոկոսով՝ (տես՝ աղյուսակ 1):

Աղյուսակ 1. Արցախի Հանրապետության մշտական բնակչության թվաքանակը 2018-2019 թվականների հունվարի 1-ի դրությամբ


Ժամանակահատվածը	Բնակչության թվաքանակը (հազար մարդ)
2019 թվականի հունվարի 1-ի դրությամբ	148,0
2018 թվականի հունվարի 1-ի դրությամբ	147,0

4. Արցախի Հանրապետության բնակչության թվաքանակի փոփոխությունները պայմանավորված են բնակչության աճի բաղադրիչների՝ ծնելիության, մահացության, ամուսնության ու ամուսնալուծության և միգրացիայի ցուցանիշների փոփոխություններով:

5. Գծապատկեր 1-ում պատկերված է Արցախի Հանրապետությունում 2008-2018 թվականներին գրանցված ծնունդների թիվը: 2018 թվականին գրանցվել է 2 328 կենդանի ծնված՝ ութով պակաս, քան 2017 թվականին (2 336):




Գծապատկեր 1. Արցախի Հանրապետությունում 2008-2018 զրանցված ծնունդների թիվը



6. Ծնելիության ցածր ցուցանիշը պայմանավորող գործոններից մեկն ամուսնությունների առկա մակարդակն է: Գծապատկեր 2-ում պատկերված է Արցախի Հանրապետությունում 2008-2018 թվականներին գրանցված ամուսնությունների և ամուսնալուծությունների թիվը: Այդ ժամանակահատվածում ամուսնությունների միջին ցուցանիշը կազմել է 1 215: 2018 թվականին գրանցված ամուսնությունները 2017 թվականի համեմատ (961) նվազել են 62-ով և կազմել՝ 899: Ամուսնալուծության դեպքերը 2018 թվականին նվազել են 6,5 տոկոսով կամ 23-ով և կազմել՝ 204:


Գծապատկեր 2. Արցախի Հանրապետությունում 2008-2018 թվականներին գրանցված ամուսնությունների և ամուսնալուծությունների թիվը



7. Գծապատկեր 3-ում պատկերված է Արցախի Հանրապետությունում 2008-2018 թվականներին գրանցված մահացածների թիվը: 2018 թվականին Արցախի Հանրապետությունում գրանցվել է մահվան 1 185 դեպք՝ 2017 թվականի (1 238) համեմատ նվազելով 53 դեպքով: Մահացության պատճառական կառուցվածքում մահացության հիմնական

պատճառներն են՝ 2018 թվականին արյան շրջանառության համակարգի հիվանդությունները՝ 799 դեպք (67,4 տոկոս), վնասվածքները, թունավորումները և արտաքին պատճառների ներգործության որոշ այլ հետևանքները՝ 49 դեպք (4,1 տոկոս), նորագոյացությունները՝ 202 դեպք (17,0 տոկոս), մարտոդական օրգանների հիվանդությունները՝ 19 դեպք (1,6 տոկոս), վարակիչ և մակարոնական հիվանդությունները՝ 4 դեպք (0,34 տոկոս): 2018 թվականին՝ 2017 թվականի համեմատ, նշված պատճառներից մահացությունների նվազում են գրանցվել արյան շրջանառության համակարգի հիվանդություններից 48-ով (5,7 տոկոսով) և մարտոդական օրգանների հիվանդություններից 11-ով (36,6 տոկոսով): Դեպքերի նվազում է գրանցվել նորագոյացություններից 11-ով (5,1 տոկոսով), իսկ աճ՝ վարակիչ և մակարոնական հիվանդություններից 2-ով ( 50,0 տոկոսով):

Գծապատկեր 3. Արցախի Հանրապետությունում 2008-2018 թվականներին գրանցված մահացածների թիվը



8. 2018 թվականին Արցախի Հանրապետությունում արձանագրվել է մինչև մեկ տարեկան երեխաների մահացության 12 դեպք՝ 1 000 կենդանածնի հաշվով 5,2 երեխա՝ նախորդ տարվա 15 դեպքի և 6,4 երեխայի համեմատ: Համաձայն Միացյալ ազգերի կազմակերպության մանկական հիմնադրամի 2019 թվականի զեկոյցի՝ աշխարհում 1 000 կենդանածնի հաշվով 2018 թվականին գրանցվել է 26.5 մանկամահացության դեպք:

9. Հղիության հետ կապված բարդություններով պայմանավորված՝ ծննդյան և հետծննդյան ժամանակահատվածում 2018 թվականին Արցախի Հանրապետությունում մայրամահացության դեպք չի գրանցվել, իսկ 2017 թվականին գրանցվել է մեկ դեպք:

10. 2018 թվականին ծնվածների թիվը կազմել է 2 328 մարդ, մահացածներինը՝ 1 185, իսկ 2017 թվականին՝ համապատասխանաբար 2 336 և 1 238 մարդ: Արդյունքում, բնական հավելաճը 2018 թվականին կազմել է 1 143 մարդ, իսկ 2017 թվականին՝ 1 098 մարդ:

11. Արցախի Հանրապետությունում տեղի ունեցող ժողովրդագրական գործընթացների վրա իր ազդեցություն ունի նաև գործազրկության մակարդակը: Գծապատկեր 4-ում պատկերված են Արցախի Հանրապետությունում 2014-2018 թվականներին պաշտոնապես հաշվառված և Արցախի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության տվյալներով գործազուրկների թվաքանակը: Հարկ է փաստել, որ 2018 թվականին Արցախի Հանրապետությունում պաշտոնապես հաշվառված գործազուրկների թվաքանակը 2017 թվականի նկատմամբ աճել է 7,1 տոկոսով: Գործազուրկների թվաքանակի մասին Արցախի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության տվյալները տարբերվում են